

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՇԱԽՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**

**ԲՈՆՑՔԱՄԱՐՏՈՒՄ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ**

ԺԳ.00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2016**

Ատենախոսության թեման հաստատվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

**Ա. Լ. Հակոբյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**Բ. Զ. Սադյան**

մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

**Հ.Գ. Թումանյան**

Առաջատար կազմակերպություն՝

**Վանաձորի Հով. Թումանյանի  
անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. մարտի 25-ին ժամը 16<sup>00</sup> ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ-ի փետրվարի 24-ին:

**Մանկավարժության 065 մասնագիտական**

**խորհրդի գիտական քարտուղար**

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

**Ա.Փ. Ղազարյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **Թեմայի արդիականությունը**

Ժամանակակից բռնցքամարտը բնութագրվում է մարզման գործընթացի և մրցակցային գործունեության բարձր լարվածությամբ, խիստ սահմանափակ ժամանակի պայմաններում բարդ կոորդինացիոն տեխնիկատակտիկական հնարքների կատարմամբ, օրգանիզմի վրա ֆիզիկական և նյարդահոգեկան մեծ բեռնվածությամբ: Նման բարդությունները հաղթահարել և մարզական բարձր նվաճումների հասնել կարող են ոչ բոլորը, այլ միայն ընտրյալները՝ օժտված համապատասխան ընդունակություններով (հատկություններով և որակներով): Այդ իսկ պատճառով բռնցքամարտիկների պատրաստության համակարգում օժտված, հեռանկարային, տաղանդավոր մարզիկների ընտրությունը կարևոր նշանակություն է ստանում:

Ըստ Ռ. Կովաոի (1997)՝ բնակչության միայն 0,13% են կազմում սպորտային տաղանդները: Սպորտային ընտրության միջոցով վերջիններիս հայտնաբերումը իրենից ներկայացնում է համալիր, բազմաստիճան, մեթոդական և կազմակերպչական երկարատև միջոցառումների տարաբնույթ համակարգ: Այն իր մեջ ընդգրկում է մանկավարժական, մարդաչափական, ֆունկցիոնալ, հոգեբանական, սոցիոլոգիական և հետազոտության այլ մեթոդներ, որոնց շնորհիվ բացահայտվում են անհատի օժտվածությունը և ընդունակությունները որևէ մարզաձևում՝ ինչպես նաև բռնցքամարտում մասնագիտանալու համար:

Բազմաստիճան ընտրությունը ապագա մարզիկի այս կամ այն մարզաձևը ընտրելուց մինչ երկրի հավաքական թիմի անդամ դառնալու և բարձր նվաճումների հասնելու գործընթաց է: Սպորտային պատրաստության սկզբնական փուլում համալիր, բազմակողմանի, լիարժեք, ճշգրիտ ընտրությունից է կախված բարձրակարգ, համաշխարհային բարձունքների հասնելու ընդունակ մարզիկի կայացումը:

Եթե բռնցքամարտում սպորտային պատրաստության սկզբնական փուլում չիրականացվի նման ընտրություն, ապա այդ գործընթացի հաջորդ փուլերում մարզիկի հեռանկարայնության վերաբերյալ կանխատեսումները արդյունավետ լինել չեն կարող: Եթե այս փուլում 12-14 տարեկան բռնցքամարտիկների շարքում մարզիչը չհայտնաբերի այն կարևորագույն ընդունակությունները, որոնք անհրաժեշտ են բռնցքամարտում, ապա բարձր տարիքում սպորտային ընտրության հարցում նա կկանգնի լուրջ դժվարությունների առջև (А.О. Акоюн с соавт., 2005, А.Н. Шиловский, 2010):

Գիտամեթոդական գրականության վերլուծությունը բռնցքամարտիկների սպորտային ընտրության խնդրի վերաբերյալ (В. П. Снигирев, 1972, С. Г. Антонов, 1997, В. В. Кличко, 1999, А. И. Белашев, 2000, М. Б. Мартынов, 2002, С. А. Полиевский и др., 2002, В. Д. Коба, 2012), ինչպես նաև բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոցների՝ տարբեր տարիների (1971-2015թթ.) ծրագրերի ուսումնասիրումը ցույց տվեց, որ առաջադրված հարցը դեռևս կատարելագործման կարիք ունի: Ա. Բելաշևի (2000), Վ. Կոբայի (2012) մշակումները համալիր ընտրության խնդրի վերաբերյալ բռնցքամարտիկների սկզբնական

պատրաստության փուլում տեղ չեն գտել գործնականում: Այս ամենը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս բազմակողմանի և հստակ որոշված չեն այն ցուցանիշները և դրանց ուսումնասիրման մատչելի մեթոդները, ինչպես նաև չափանիշները, մշակված չեն մոդելային գնահատման սանդղակները, որոնք հնարավորություն կընձեռեն ընտրել հեռանկարային բնօրհանարտիկներին և համալրել ուսումնամարզական խմբերը: Հարկ է նշել նաև, որ մոդելային գնահատման սանդղակներ մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև մարզիկների ազգային պատկանելիությունը: Բացի այդ, ըստ որոշ հեղինակների (B. M. Волков, 1981, Н.Ж. Булгакова, В. А. Румянцев, 1995, Р. А. Джилаян, 2001, Ю.С. Воронов, 2005)՝ սպորտային ընտրության իրականացումը՝ հիմնված համապատասխան ցուցանիշների ամբողջական՝ համալիր-գումարային գնահատականի վրա, բարձրացնում է այդ գործընթացի արդյունավետությունը, մարզիկների հեռանկարայնության կանխատեսման հուսալիությունը: Նշված մոտեցումը նույնպես տեղ չի գտել բնօրհանարտիկների ընտրության գործընթացում: Հիմնվելով վերը շարադրվածի վրա՝ կարելի է նշել, որ սպորտային ընտրության համակարգը պատանի բնօրհանարտիկների սկզբնական պատրաստության փուլում դեռևս կատարյալ չէ: Այդ իսկ պատճառով, մշակելով ընտրության համալիր-գումարային գնահատման համակարգը, ուր հաշվի կառնվեն երեխաների մորֆոֆունկցիոնալ, շարժողական ընդունակությունների, հոգեբանական, ժառանգական գործոնները, և կտրվի դրանց ամբողջական գնահատականը, կլրացվեն այն բացթողումները, որոնք առկա են սպորտային ընտրության գործող համակարգում:

Սպորտային ընտրության համալիր-գումարային գնահատման համակարգի մշակումը և կիրառումը թույլ կտա հստակ, պարզ և օբյեկտիվ գնահատել մարզիկի պիտանիությունը՝ բացահայտելով ուսումնասիրվող ցուցանիշների զարգացման մակարդակը ինչպես առանձին վերցված, այնպես էլ ամբողջական, որը էապես կհեշտացնի մարզիչների գործունեությունը մարզիկներ ընտրելիս, հնարավորություն կընձեռեի առավել հստակորեն կողմնորոշվել բազմաթիվ և անհրաժեշտ ցուցանիշների շարքում: Արդյունքում կբարձրանա սպորտային ընտրության համակարգի արդյունավետությունը:

### **Հետազոտության նպատակը**

Ուսումնամարզական խմբերը հեռանկարային բնօրհանարտիկներով համալրելու նպատակով կատարելագործել սպորտային ընտրության համալիր համակարգը և գիտափորձով հիմնավորել դրա արդյունավետությունը:

### **Հետազոտության խնդիրները**

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. գիտամեթոդական գրականության ուսումնասիրման և վերլուծության հիման վրա բացահայտել բնօրհանարտիկների ընտրության խնդիրն վերաբերող հիմնահարցերը,
2. ուսումնասիրել բնօրհանարտի մարզիչների կարծիքները սպորտային ընտրության վերաբերյալ,
3. բացահայտել 12-14 տարեկան բնօրհանարտիկների մորֆոֆունկցիոնալ, շարժողական ընդունակությունների, ժառանգական, հոգեբանական

ցուցանիշների զարգացման առանձնահատկությունները և դրանց հիման վրա մշակել պատանի մարզիկների ընդունակությունների գնահատման տարիքային մոդելային սանդղակներ,

4. մշակել սպորտային ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկան հեռանկարային բոնցքամարտիկներով ուսումնամարզական խմբերը համալրելու համար և մանկավարժական համեմատական գիտափորձով հիմնավորել դրա արդյունավետությունը:

#### **Հետազոտության գիտական նորոյթը**

Առաջին անգամ ստացվել են 12-14 տարեկան հայաստանցի բոնցքամարտիկների շարժողական ընդունակությունների, մորֆոֆունկցիոնալ և հոգեբանական ցուցանիշների վերաբերյալ տվյալներ:

Մշակվել է բոնցքամարտիկների ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկա՝ ուսումնամարզական խմբերը համալրելու համար, և ապացուցվել է նրա արդյունավետությունը:

Գիտականորեն հիմնավորվել է մորֆոֆունկցիոնալ, շարժողական ընդունակությունների, հոգեբանական և ժառանգական ցուցանիշների մոդելային գնահատման սանդղակների, ինչպես նաև ամբողջական (հանրագումարային) մոդելային սանդղակի մշակման նպատակահարմարությունը պատանի բոնցքամարտիկների ընդունակությունների, հեռանկարայնության գնահատման և դրա հիման վրա ուսումնամարզական խմբերը համալրելու համար:

Բացահայտված է, որ մարզիկի ցուցանիշների բազմակողմանի, համալիր, ամբողջական գնահատումը էականորեն բարձրացնում է սպորտային ընտրության արդյունավետությունը:

#### **Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները**

1. Բոնցքամարտիկների սկզբնական ընտրության համալիր համակարգի կատարելագործումը արդիական պահանջ է, որի լուծման արդյունքում հնարավոր է բարելավել հեռանկարային պատանիների ուսումնամարզական խմբերում համալրելու գործընթացը:
2. Մշակված գնահատման մոդելային սանդղակների օգտագործումը պատանի բոնցքամարտիկների պատրաստության գործընթացում նախադրյալներ է ստեղծում տաղանդավոր մարզիկների արդյունավետ սկզբնական ընտրության կազմակերպման համար:
3. Պատանի բոնցքամարտիկների ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկան, որն ամբողջական ընդգրկում է մարզիկների մորֆոֆունկցիոնալ, հոգեբանական, ժառանգական, շարժողական ընդունակությունների ցուցանիշները, հնարավորություն է տալիս բարձրացնել ուսումնամարզական խմբերի մարզումային և մրցակցային գործընթացի արդյունավետությունը:

#### **Հետազոտության տեսական-կիրառական նշանակությունը**

Մշակված, գիտականորեն հիմնավորված սպորտային ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկան նպաստում է ընտրության համակարգի կատարելագործմանը, ընդլայնում, լրացնում է սպորտային մարզման տեսության և մեթոդիկայի դրույթները:

Աշխատանքի նյութերը կարող են կիրառվել բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոցների ծրագրերը մշակելիս, դասագրքերի, մեթոդական ցուցումների կազմման, մարզիչների վերապատրաստման ժամանակ, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտներում «Բռնցքամարտի մարզման տեսություն և մեթոդիկա» առարկայի դասավանդման գործընթացում:

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս արդյունավետ իրականացնել պատանի բռնցքամարտիկների ընտրության գործընթացը, մարզիչները հնարավորություն են ստանում առավել ռացիոնալ կազմակերպել երեխաների ընտրությունը ուսումնամարզական խմբերը համալրելու համար: Հետազոտության արդյունքները կօգտագործվեն պատանի մարզիկների ուսումնամարզական գործընթացում: Մոդելային գնահատման սանդղակների միջոցով մարզիչները կգնահատեն յուրաքանչյուր բռնցքամարտիկի սպորտային հեռանկարայնությունը:

### **Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը**

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության մատենագիտական ցանկից, հավելվածներից:

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային տեքստի 138 էջի վրա, պարունակում է 17 աղյուսակ, 2 նկար, 21 գծապատկեր, մատենագիտական 229 աղբյուր, 3 հավելված:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, տեսական-կիրառական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

**«Սպորտային ընտրության հիմնահարցը բռնցքամարտիկների պարասպորտային գործընթացում»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին (**«Ընտրության դերն ու նշանակությունը ժամանակակից սպորտում»**) ենթագլխում քննարկվում է սպորտային ընտրության դերը և նշանակությունը, այդ թվում նաև բռնցքամարտում: Մատենանշվում է, որ միայն մարզման գործընթացի կատարելագործմամբ հնարավոր չէ հասնել մարզական ակնառու արդյունքների: Անհրաժեշտ է նաև, որ մարզիկը օժտված լինի մորֆոֆունկցիոնալ, շարժողական ընդունակությունների և հոգեբանական համապատասխան տվյալներով: Ընդ որում, դրանք պետք է լինեն զարգացման բարձր մակարդակի վրա: Նման ցուցանիշների համադրմամբ մարզիկներ հանդիպում են ծայրահեղ հազվադեպ: Ուստի բարձրակարգ մարզիկների պատրաստության համակարգում կարևորագույն տեղ է գրավում սպորտային ընտրության խնդիրը՝ օժտված, հեռանկարային անձանց հայտնաբերելու նպատակով:

երկրորդ (**«Կանխարեսումը և ընդունակությունների հաշվառումը սպորտային ընտրության գործընթացում»**) ենթագլխում նշվում է, որ սպորտային ընտրության հիմնահարցը պայմանավորված է մի շարք խնդիրների լուծմամբ, մասնավորապես մարզիկի հեռանկարայնության կանխատեսմամբ: Վերջինիս էությունը կայանում է պատանի մարզիկների շրջանում այն պոտենցիալ ընդունակությունների բացահայտման մեջ, որոնք կապահովեն բարձր նվաճումները հասուն տարիքում:

Մարզական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ սպորտային հաջողության կանխատեսումը չի գերազանցում 50-60%-ը և սխալների մեծ մասը սպորտային ընտրությունում կապված է կանխատեսման հարցի հետ:

Կանխատեսումներ կատարելիս խիստ անհրաժեշտ է կիրառել համալիր ուսումնասիրություններ, հիմնված մանկավարժական, մարդաչափական, ֆունկցիոնալ, հոգեբանական հետազոտությունների տվյալների վրա: Հանրահայտ է, որ շարժողական ընդունակությունների, մորֆոֆունկցիոնալ և հոգեբանական ցուցանիշները օնտոգենետիկ ընթացքում ենթարկվում են համապատասխան փոփոխությունների: Ըստ ուսումնասիրությունների արդյունավետ կանխատեսումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունները կրում են կայուն բնույթ: Ուստի ընտրության ժամանակ անհրաժեշտ է առաջնահերթ ուշադրություն դարձնել կայուն ցուցանիշների վրա, որոնք առավել կանխատեսելի են, քանի որ մարզման գործընթացը դրանց վրա քիչ է ազդում և փոփոխում: Այս կարգի ցուցանիշները, որոնք սահմանափակում են մարզական հաջողությունները, պահպանում են իրենց նշանակությունը, արժեքը աճի և զարգացման ընթացքում:

**«Սպորտային ընտրությունը և ժառանգական նախադրյալները»** երրորդ ենթագլխի ուսումնասիրման առարկա են ժառանգականությամբ պայմանավորված այն կարևոր ընդունակությունները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել սպորտային ընտրություն իրականացնելիս: Ընդ որում, այդ ընդունակությունները պետք է համապատասխանեն մարզաձևի պահանջներին, հակառակ դեպքում բարձրակարգ մարզիկ դառնալու հնարավորությունը դրվում է հարցականի տակ:

Ըստ գրական աղբյուրների՝ ընդունակությունների հիմքն են հանդիսանում ժառանգականությամբ պայմանավորված բնական նախադրյալները (ծիրքերը): Բնական օժտվածությունից է կախված սպորտային հաջողության հասնելու հնարավորությունը, և քանի որ ժառանգականությունը սահմանափակում է ծիրքերը, ապա կարելի է ակնկալել, որ որքան բարձր են վերջիններս, այնքան մարզումների արդյունքում անհատը կարող է հասնել նշանակալից նվաճումների:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են սպորտային ընտրության գործընթացում կարևորվող կայուն, ժառանգականությամբ պայմանավորված այն ընդունակությունները, որոնք հաշվի են առնվում հեռանկարային բռնցքամարտիկներ ընտրելիս:

Տվյալ գլխի չորրորդ (**«Բարձրակարգ բռնցքամարտիկների «մոդելային բնութագիրը»՝ որպես պատանի մարզիկների ընտրության կողմնորոշիչներ»**) ենթագլխում գրականության տվյալների վերլուծության արդյունքում ի մի են բերվել բարձրակարգ բռնցքամարտիկների այն ընդունակությունները, որոնք, բնութագրելով նրանց մոդելային պատկերը, ոչ միայն կարևոր գործոններ են հաղթանակների

ձեռքբերման համար, այլև դիտվում են որպես կողմնորոշիչներ, ցուցիչներ սպորտային ընտրությունը գրագետ կառուցելու համար: Նման ցուցիչների բովանդակությունը մորֆոֆունկցիոնալ գործոններից կազմում են մարմնի և վերջույթների երկարությունը, սիրտ-անոթային, շնչառական համակարգի ցուցանիշները, ֆիզիկական աշխատունակությունը (PWC<sub>170</sub>), հոգեբանական գործոններից՝ ժամանակի և տարածության զգայությունը, ուշադրության բաշխումը, պարզ ռեակցիան, բռնցքամարտով զբաղվելու դրդապատճառները:

Շարժողական ընդունակությունների շարքում բացի արագային, ուժային, արագաուժային, դիմացկունության ցուցանիշներից, մոդելային պատկերը կազմում են նաև ճկունությունը, դինամիկ հավասարակշռությունը, հարվածների արագությունը, ճարպկությունը:

**«Պատանի բռնցքամարտիկների ընտրության հիմնահարցի ներկայիս վիճակը»** հինգերորդ ենթազվխում ուսումնասիրվել և ամփոփվել են սկզբնական ընտրության գործընթացում առկա մոտեցումները: Գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը վկայում է, որ բռնցքամարտիկների սկզբնական պատրաստության փուլում դեռևս բացակայում են միասնական մոտեցումները օժտված երեխաների ընտրման մեթոդիկայում: Կատարյալ չէ երեխաների ընտրության համակարգը, որը պետք է լինի բազմակողմանի, պարզ, համալիր, հուսալի օժտված և հեռանկարային բռնցքամարտիկներ ընտրելիս: Մշակված չեն մանկավարժական, մորֆոֆունկցիոնալ, հոգեբանական, ժառանգական գործոնները բնութագրող ցուցանիշների նորմատիվային պահանջները, մոդելային գնահատման սանդղակներն ինչպես ըստ տարբեր գործոնների, այնպես էլ ամբողջական, որոնք միջոցով կարելի է գնահատել մարզիկի ընդունակությունները և հեռանկարայնությունը: Որոշ կարևոր ցուցանիշներ՝ վերին և ստորին վերջույթների երկարությունը, կամային հատկությունները, բռնցքամարտով զբաղվելու դրդապատճառները, տարածության և ժամանակի զգայությունը, ուշադրության բաշխումը, բռնցքամարտիկների ծնողների սպորտով զբաղվելու փաստը, դինամիկ հավասարակշռությունը, ցատկունակությունը, որոնք բխում են բարձրակարգ բռնցքամարտիկների մոդելային բնութագրից, հաշվի չեն առնվում ընտրություն կատարելիս: Որոշ ընդունակությունների թեստավորման մեթոդները բարդ են, պահանջում են ունենալ սարքավորումներ, որոնք հասանելի չեն մարզիչներին:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը կրում է **«Հեղազոտության մեթոդները և կազմակերպումը»** խորագիրը, բաղկացած է երկու ենթազվխից:

Առաջին (**«Հեղազոտության մեթոդները»**) ենթազվխում ներկայացված են գիտամեթոդական գրականության ուսումնասիրության, վերլուծության և ընդհանրացման, մանկավարժական թեստավորման և դիտման, մարդաչափական չափումների, ֆունկցիոնալ փորձերի, հոգեբանական թեստավորման, սոցիոլոգիական հարցման, մանկավարժական համեմատական գիտափորձի և մաթեմատիկական վիճակագրության հետազոտության մեթոդները: Տվյալ մեթոդները ընտրելիս, ի տարբերություն պրակտիկայում կիրառվող համեմատաբար բարդ հետազոտման մեթոդների, մենք առաջնորդվել ենք սկզբունքով, որ դրանք լինեն հեշտ, պարզ, մատչելի գործնականում կիրառելիս: Միևնույն ժամանակ բավարարեն հուսալիության, օբյեկտիվության և տեղեկատվական պահանջները:



Հետազոտությունները իրականացվել են համաձայն գրականության մեջ տեղ գտած երաշխավորագրերի, և հետազոտվողների համար պահպանվել են հետազոտության միևնույն պայմանները:

Երկրորդ («**Հերազոտության կազմակերպումը**») ենթազխում ներկայացված է հետազոտության կազմակերպումը: Հետազոտությունը կազմակերպվել և անցկացվել է երեք փուլով:

**Առաջին փուլ.** վերլուծվել են հիմնահարցին վերաբերվող գրական աղբյուրները, հստակեցվել են հետազոտության խնդիրները, ընտրվել են համապատասխան մեթոդներ, անցկացվել են սոցիոլոգիական հարցումներ ՀՀ առաջատար թվով 24 մարզիչներից, ուսումնասիրվել են ք. Երևանի 5 մարզադպրոցների 12, 13 և 14 տարեկան թվով 326 բռնցքամարտիկների մորֆոֆունկցիոնալ, շարժողական ընդունակությունների, ժառանգական և հոգեբանական ցուցանիշներ, իրականացվել է հարցում տվյալ բռնցքամարտիկների ծնողներից:

**Երկրորդ փուլ.** վերլուծվել են հետազոտության արդյունքները՝ մշակվել են հետազոտված ցուցանիշների գնահատման մոդելային և դրանց միավորների հանրագումարային մեծությունների սանդղակները՝ հեռանկարային մարզիկներ ընտրելու համար:

Մեր կողմից մշակված ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկայի արդյունավետության հիմնավորման համար Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական և «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության՝ Երևանի բռնցքամարտի օլիմպիական հերթափոխի մարզադպրոցներում հետազոտված մարզիկներից ընտրվել են 13-14 տարեկան բռնցքամարտիկներ, որոնցով կազմավորվել են փորձարարական ու ստուգողական խմբեր (յուրաքանչյուրում 15 մարզիկ), և իրականացվել է մանկավարժական համեմատական գիտափորձ:

**Երրորդ փուլ.** մշակվել են հետազոտության արդյունքում ստացված տվյալները՝ մաթեմատիկական վիճակագրության մեթոդների միջոցով: Վերլուծվել և ամփոփվել են ստացված արդյունքները, և շարադրվել է ատենախոսական աշխատանքը:

Ատենախոսության երրորդ («**Ընտրության համալիր համակարգի կադրե-լագործման մեխանիզմները և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը**») գլուխը բաղկացած է չորս ենթազխից:

Սույն գլխի առաջին («**Մարզիչների կարծիքները սպորտային ընտրության հիմնահարցի վերաբերյալ**») ենթազխում ներկայացված է մարզիչների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծումը: Ըստ հարցման տվյալների՝ հարցվողների 83%-ը կարևորում են սպորտային ընտրության դերը մարզական հաջողությունների հասնելու գործում՝ համարելով, որ մարզական նվաճումները 50-70%-ով պայմանավորված են ճիշտ կատարված ընտրությամբ: Ըստ մարզիչների 67%-ի կարծիքի՝ ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել բռնցքամարտիկների շարժողական ընդունակությունների, հոգեբանական, մորֆոֆունկցիոնալ և ժառանգական գործոնները համալիր: Այս խումբ մարզիչների, որոնք կարևորում են համալիր ընտրության սկզբունքը, 81%-ը նշել էր, որ, բացի շարժողական ընդունակությունների թեստավորումից, պրակտիկայում մնացած գործոնները իրենք չեն կարող հաշվի առնել, քանի որ ընտրության համակարգը

կատարյալ չէ, և բացակայում են այդ գործոնները բնութագրող կարևոր ցուցանիշները և չափանիշները, ինչպես նաև ներկայացված չեն վերջիններս գնահատող մատչելի ու պարզ մեխանիզմները:

Մարզիչների նման դիրքորոշումը կարելի է դիտարկել որպես սոցիալապես առաջադրված հիմնահարց ընտրության համալիր համակարգի կատարելա-գործման անհրաժեշտության վերաբերյալ:

Երրորդ գլխի երկրորդ ենթազյխում՝ **«Պարանի բռնցքամարտիկների մորֆոֆունկցիոնալ, շարժողական ընդունակությունների, հոգեբանական և ժառանգական ցուցանիշների բնութագիրը»**, ներկայացված են 12-14 տարեկան բռնցքամարտիկների մորֆոֆունկցիոնալ, շարժողական ընդունակությունների, հոգեբանական և ժառանգական ցուցանիշների ուսումնասիրման արդյունքները և դրանց հիման վրա մշակված այդ գործոնները գնահատող մոդելային սանդղակներ:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ հետազոտված մարզիկների շարժողական ընդունակությունների, հոգեբանական և մորֆոֆունկցիոնալ ցուցանիշները տարիքին և մարզման ստաժին զուգընթաց անշեղորեն աճում են: Համեմատելով բռնցքամարտիկների որոշ տվյալների՝ մարմնի հասակի, կրծքավանդակի շրջագծի, թոքերի կենսական տարողության, վազք 30մ, մաքրքավազք 3x10մ, վազք 1000մ և տեղից հեռացատկ թեստերի արդյունքները ռուսաստանցի մասնագետ Վ.Կոբայի (2012) կողմից ուսումնասիրված համանման ցուցանիշների հետ, որը նույնպես կարևորում է վերջիններիս դերը ընտրության գործընթացում, բացահայտվեց, որ նշված ցուցանիշների տարիքային զարգացումը ենթարկվում է միանման օրինաչափությունների:

Ամենայն խորությամբ հիմնավորվում է, թե ինչու են ուսումնասիրման առարկա դարձել հետազոտությունում տեղ գտած ցուցանիշները, որոնք կազմում են սկզբնական ընտրության բովանդակությունը:

Հետազոտված ցուցանիշների ներխմբային վերլուծությունները՝ ըստ մոդելային գնահատման սանդղակի, յուրաքանչյուր տարիքային խմբում բացահայտեցին, որ տարիքին և մարզման ստաժի բարձրացմանը զուգընթաց բռնցքամարտիկների քանակը, որոնց արդյունքների մեծ մասը համապատասխանում է միջինից բարձր և բարձր գնահատականի, ավելանում է, իսկ միջինից ցածր միավորի արժանացածների թիվը՝ նվազում: Տվյալ փաստը ոչ միայն տարիքային զարգացման, մարզման, մարզման ստաժի արդյունք է, այլև, ամենայն հավանականությամբ, բնական ընտրության արդյունքում միջինից ցածր գնահատականի արժանացած «թույլ» մարզիկների ուսումնական խմբերից հեռանալու:

Երրորդ՝ **«Բազմագործոնային գնահատման մոդելային սանդղակները որպես բռնցքամարտիկների սպորտային ընտրության մեթոդիկա»** խորագրով ենթազյխում նկարագրվում են մոդելային գնահատման սանդղակների մշակման մեխանիզմները: Ըստ գիտամեթոդական գրականության՝ երաշխավորագրերի ուսումնասիրվող ցուցանիշների գնահատման մոդելային սանդղակների մշակումը իրականացրել ենք 0,67-1,5 սիգմա տատանումների շրջանակում, բացի այն դեպքերից, երբ այդ ցուցանիշների գնահատումը համաձայն հետազոտության մեթոդիկայի արտահայտվել է բալերով: Ցուցանիշների գնահատումը իրականացվել է հինգ միավորանոց համակարգում, յուրաքանչյուր միավորին համապատասխանել է

այս կամ այն ցուցանիշի զարգացման՝ ցածր, միջինից ցածր, միջին, միջինից բարձր և բարձր մակարդակը:

Բռնցքամարտիկների ցուցանիշների գնահատումը իրականացվել է ըստ համապատասխան բաժինների՝ մարդաչափական, ֆունկցիոնալ, հոգեբանական, ժառանգական և շարժողական ընդունակությունների:

Շարժողական ընդունակություններ բաժինը ներառում է 11 ցուցանիշ՝ վազք 30մ բարձր մեկնարկից, վազք 1000մ, մաքուրավազք 3x10մ, սեղմումներ հատակից, ձգումներ պտտածողից, հեռացատկ տեղից, իրանի թեքում առաջ նստած դիրքից, լցված գնդակի նետում գլխի հետևից, դինամիկ հավասարակշռություն, ցատկեր ցատկապարանով 1 րոպեում և հարվածներ մարզապարկին 8վրկ-ի ընթացքում:

Հոգեբանական գործոններ բաժնում ընդգրկված են 6 ցուցանիշներ՝ ժամանակի և տարածության զգայության, պարզ ռեակցիայի, ուշադրության բաշխման, կամային հատկությունները և բռնցքամարտով զբաղվելու դրդապատճառները:

Ժառանգական գործոններ բաժինը ներկայացված է 2 ցուցանիշով՝ բռնցքամարտիկների ծնողների սպորտով զբաղվելը և մարզիկի ծնունդը ընտանիքում ըստ հերթականության:

Մարդաչափական և ֆունկցիոնալ ցուցանիշների բաժնի բովանդակությունը կազմում են՝ ֆիզիկական աշխատունակությունը (PWC<sub>170</sub>) ըստ ստեյթեստի և նրա հարաբերական մեծությունը, թթվածնի առավելագույն սպառումը, թոքերի կենսական տարողությունը, կրծքավանդակի շրջագիծը և էքսկուրսիան, մարմնի հասակը, վերին և ստորին վերջույթների երկարությունը և շնչառության պահման տևողությունը արտաշնչումից հետո:

Յուրաքանչյուր բռնցքամարտիկի հեռանկարայնությունը որոշվում է հետևյալ կերպ. գնահատվում է առանձին ցուցանիշի մակարդակը յուրաքանչյուր բաժնում, որին համապատասխանում է այս կամ այն միավորը: Այնուհետև հաշվարկվում է տվյալ բաժնի ցուցանիշների ընդհանուր գումարը, իսկ բոլոր բաժինների ցուցանիշների հանրագումարը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել հետազոտվողի հեռանկարայնության մասին՝ ըստ հանրագումարային մոդելային սանդղակի (աղյուսակ 1):

## Աղյուսակ 1

### Բռնցքամարտիկների հեռանկարայնությունը գնահատող հանրագումարային մոդելային սանդղակ

Գնահատման մակարդակը	Միավորները
Բարձր	130,51 և բարձր
Միջինից բարձր	101,51 - 130,50
Միջին	72,51 - 101,50
Միջինից ցածր	43,51 - 72,50
Ցածր	43,50 և ցածր

Արդյունավետ ընտրություն կատարելու համար հեռանկարային մարզիկի հավաքած միավորների գումարը պետք է համապատասխանի միջինից բարձր և

բարձր գնահատման մակարդակին, ինչն էլ հանդիսացել է այն անհրաժեշտ պայմանը, որով մենք ուղղորդվել ենք:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ **«Ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկայի արդյունավետության փորձարարական հիմնավորումը»**, ներկայացված է հեռանկարային բնօրգամարտիկների ընտրության մեթոդիկայի արդյունավետության գնահատումը ըստ համալիր-գումարային գնահատման եղանակի:

Այդ իսկ պատճառով իրականացվել է մանկավարժական համեմատական գիտափորձ մեկ տարի տևողությամբ: Վերջինիս նպատակն է եղել, համեմատելով որոշ ցուցանիշների փոփոխությունները փորձարարական և ստուգողական խմբերի բնօրգամարտիկների միջև, որոնք ընտրվել էին համապատասխանաբար ըստ համալիր-գումարային գնահատման մեթոդիկայի և մարզադպրոցների ծրագրի առաջարկությունների, բացահայտել ընտրության մեթոդներից մեկի արդյունավետությունը:


Փորձարարական խմբի 15 բնօրգամարտիկները ընտրվել էին համաձայն համալիր-գումարային գնահատման մեթոդիկայի, ըստ որի՝ ուսումնասիրված 29 ցուցանիշների միավորների հանրագումարը կազմել է 109 միավոր, ինչը համաձայն բնօրգամարտիկների հեռանկարայնության գնահատման հանրագու-մարային մոդելային սանդղակի (աղյուսակ 1)՝ համապատասխանում է միջինից բարձր հեռանկար ունեցող մակարդակին: Ստուգողական խմբի մարզիկները (15 հոգի) ընտրվել էին բնօրգամարտի մարզադպրոցի ծրագրային պահանջի համաձայն՝ ըստ շարժողական պատրաստվածության 4 ցուցանիշների, լրացուցիչ ցուցանիշների գերակշիռ մասի գնահատականներն էլ համապատասխանում էին միջին մակարդակին, իսկ բոլոր ցուցանիշների հանրագումարը՝ 91 միավորի:

Երկու խումբ բնօրգամարտիկները, ըստ շարժողական ընդունակությունների արդյունքների, որոնք հանդիսանում են նորմատիվային փոխադրական պահանջ սկզբնական պատրաստության խմբից ուսումնամարզական խումբ ընտրություն կատարելիս, միմյանցից չեն տարբերվել, ինչպես նաև չեն տարբերվել ըստ տարիքի և մարզական ստաժի: Մարզման գործընթացի բովանդակությունը նույնպես միմյանցից չի զանազանվել:

Վերլուծությունների արդյունքում պարզվեց, որ փորձարարական խմբի բնօրգամարտիկների համապատասխան ցուցանիշների առավելությունը ստուգողական խմբի մարզիկների նկատմամբ ոչ միայն պահպանվել էր գիտափորձից հետո, այլ նաև այդ գերազանցումը ավելի է մեծացել: Փորձարարական խմբի մարզիկները գերազանցել են նաև տվյալ ցուցանիշների զարգացման տեմպով:

Ֆունկցիոնալ գործոնների, մասնավորապես՝ թոքերի կենսական տարողության (ԹԿՏ) և շնչառությունը պահելու տևողությունը արտաշնչումից հետո ցուցանիշների տվյալների տարեկան շարժի վերլուծությունից պարզվեց, որ փորձարարական խմբում տվյալները բարելավվել են, համապատասխանաբար՝ 17,65% և 15,31%-ով, իսկ ստուգողականում՝ 15,27% և 7,94%-ով (զծապատկեր 1), իսկ թթվածնի առավելագույն սպառման ցուցանիշները խմբերում բարձրացել են գրեթե միանման, համապատասխանաբար՝ 7,84% և 7,63%-ով:

Փորձարարական և ստուգողական խմբերի մարզիկների ԹԿՏ և շնչառության պահման տևողության ցուցանիշների զարգացման տեմպը




Ուսումնասիրելով ֆիզիկական աշխատունակության տվյալների շարժը՝ ըստ PWC<sub>170</sub> կգմ/րոպե ստեպ-թեստի, պարզ դարձավ, որ փորձարարական խմբում այս ցուցանիշի զարգացման տեմպը նույնպես բարձր է, իսկ սրտի զարկերի հաճախականության (ՍԶՀ) թերվերականգնումը ստեպ-թեստի կատարումից հետո առավել փոքր չափով է արտահայտվում (գծապատկեր 2):

Հոգեբանական ցուցանիշների զարգացումը փորձարարական խմբում նույնպես առավել արդյունավետ է ընթանում: Դա արտահայտվում է նրանով, որ պարզ շարժողական ռեակցիայի բարելավման տեմպը ըստ «ընկնող քանոն» թեստի դրսևորվում է առավել ցայտուն: Գնահատելով «ժամանակի զգացման» և «տարածության զգացման» կարողությունը՝ ըստ թույլ տված սխալի մեծության, մենք պարզեցինք, որ փորձարարական խմբում այս տվյալները նվազում են առավել մեծ տեմպերով (գծապատկեր 3):

Վերլուծելով շարժողական ընդունակությունների զարգացման տեմպերը՝ մենք բացահայտեցինք, որ փորձարարական խմբի մարզիկների շրջանում այն արտահայտված է առավել ցայտուն: Օրինակ, գնահատելով ուժային կարողությունը ըստ ձգումներ պտտածողից թեստի, պարզվեց, որ փորձարարական խմբի բռնցքամարտիկների տվյալները բարելավվել են 41,8%-ով, իսկ ստուգողականի մարզիկներինը՝ 25,3%-ով, ճարպկությունը գնահատող ցուցանիշները, ըստ 3x10մ մաքրավազք թեստի, բարելավվել են համապատասխանաբար 4,1% և 2,8%-ով: Դիմացկունության արդյունքները՝ ըստ վազք 1000մ թեստի բարելավվել են 6,98%-ով և 3,59%-ով, արագաշարժության ցուցանիշները (վազք 30մ) համապատասխանաբար՝ 3,5% և 2,4%-ով: Նման փոփոխություններ արձանագրեցինք նաև սեղմումներ հատակից, թեքում առաջ, դինամիկ հավասարակշռության ցուցանիշներում, որոնց արդյունքները ներկայացված են ատենախոսական աշխատանքում, ինչպես նաև արագաուժային ընդունակությունները գնահատելիս՝ ըստ հեռացատկ տեղից և լցված գնդակի նետում վարժությունների (գծապատկեր 4):


**Գծապատկեր 2**

Փորձարարական և ստուգողական խմբերի մարզիկների PWC<sub>170</sub> և U23 թերվերականգնման ցուցանիշների փոփոխման տեմպը



**Գծապատկեր 3**

Փորձարարական և ստուգողական խմբերի մարզիկների «Ընկնող քանոն», «Ժամանակի զգացում», «Տարածության զգացում» ցուցանիշների փոփոխման տեմպը



Ուսումնասիրելով հարվածների քանակը և ցատկապարանով ցատկեր վարժության արդյունքները՝ պարզեցինք վերը նշված նույն առանձնահատկությունները (գծապատկեր 5):


Գնահատելով յուրաքանչյուր գործոնի (ֆունկցիոնալ, հոգեբանական և շարժողական ընդունակության) փոփոխման տեմպը՝ ըստ համեմատվող ցուցանիշների միջին թվաբանական մեծության, պարզեցինք, որ փորձարարական խմբի բռնցքամարտիկները գերազանցում են ստուգողականի մարզիկներին: Մասնավորապես, ֆունկցիոնալ ցուցանիշների աճի տեմպը վերջինների շրջա-նում կազմում էր 10,66%, իսկ առաջինների շրջանում՝ 14,1%, հոգեբանական ցուցանիշներինը համապատասխանաբար՝ 12,07% և 28,04%, իսկ շարժողական ընդունակությունների ցուցանիշները՝ 8,13% և 13,4%:

Ընտրության համալիր գումարային գնահատման մեթոդիկայի արդյունավետությունը հիմնավորվել է նաև լրացուցիչ թեստերի կիրառման միջոցով, որոնց տվյալները ներկայացված են ատենախոսական աշխատանքում:

Նման փոփոխությունները փաստում են համալիր-գումարային ընտրության համակարգի արդյունավետության մասին, որը անշուշտ անդրադարձել է փորձարարական խմբի բռնցքամարտիկների մրցակցային գործունեության և մրցումներին հաջող հանդես գալու գործընթացի վրա:


**Գծապատկեր 4**

Փորձարարական և ստուգողական խմբերի մարզիկների հեռացատկ տեղից և լցված գնդակի նետում թեստերի արդյունքների զարգացման տեսակը



**Գծապատկեր 5**

Փորձարարական և ստուգողական խմբերի մարզիկների հարվածներ ձեռքերով և ցատկեր ցատկապարանով թեստերի արդյունքների զարգացման տեսակը



Մրցակցային գործունեության որակական ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձարարական խմբի մարզիկները առաջատար են, նրանց արդյունքները ավելի բարձր են: Դիպուկ հարվածների քանակը մրցումներին հանդես գալու ժամանակ կազմում էր 12,5%, իսկ ստուգողական խմբում՝ 6,9%-ի: Վերջիններս զիջում են ոչ միայն արդյունավետ գրոհների, այլև պաշտպանողական գործողությունների կատարմամբ. «կասեցված» հարվածների քանակը կազմում էր 55,01%, իսկ փորձարարական խմբինը՝ 88,57%, որոնք գերազանցում են նաև տեխնիկատակտիկական պատրաստվածության գործակցի ցուցանիշներով՝ 1,02 և 0,63 հարաբերակցությամբ:

Քանի որ սպորտային մարզման գործընթացի առաջնային նպատակն է ապահովել մարզիկների բարեհաջող ելույթները մրցումների ժամանակ, ապա ուսումնասիրել ենք նաև մրցումներին հանդես գալու արդյունքները: Փորձարարական խմբի մարզիկները բավականին բարձր արդյունքներ են ցույց տվել նաև մրցումների ժամանակ (աղյուսակ 2):

**Աղյուսակ 2**

**Փորձարարական (Փ) և ստուգողական (Ս) խմբերի մարզիկների մրցումների արդյունքների քանակական ցուցանիշները**

N	Մրցումների անվանումը	Խմբերը	Հաղթողների քանակը	Հաղթանակների ցուցանիշը, %
1	Սպարինգ (փորձամրցում)	Փ	11	73
		Ս	7	46
2	Մարզադպրոցի բաց առաջնություն	Փ	10	67
		Ս	5	33
3	Երևան քաղաքի առաջնություն	Փ	4	27
		Ս	0	0

Այս խմբի մարզիկների շրջանում հաղթողների քանակը ընդհանուր առմամբ կազմել է 25, իսկ ստուգողական խմբում՝ 12:

Այսպիսով, ատենախոսական աշխատանքի արդյունքները թույլ են տալիս փաստել, որ մշակված և գործնականում հիմնավորված հեռանկարային բռնցքամարտիկների ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկան արդյունավետ է, և բռնցքամարտիկների ընտրության գործընթացում պետք է առաջնորդվել տվյալ մեթոդիկայի կիրառմամբ:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է հանգել հետևյալ **եզրակացություններին**.

1. Սպորտային ընտրության հիմնահարցի վերաբերյալ գիտամեթոդական գրականության վերլուծությունից և ընդհանրացումից պարզվեց, որ, չնայած տվյալ խնդրի մասին որոշ աշխատությունների առկայությանը, դեռևս լիարժեքորեն լուծված և լուսաբանված չեն սկզբնական ընտրության համալիր մոտեցումների մեթոդական հարցերը բռնցքամարտում:

2. Թեպետ բռնցքամարտում ընտրության հիմնախնդիրները ուսումնասիրվել են ըստ գիտության տարբեր ոլորտների՝ մանկավարժական, հոգեբանական, բժշկական-սաբանական, այնուամենայնիվ, պատանի մարզիկների որոշ կարևոր ցուցանիշներ՝ վերջույթների երկարությունը, շնչառության պահման տևողությունը, որոշ շարժողական և տարածաժամանակային ընդունակություններ, ուշադրության բաշխման առանձնահատկությունները և այլն, դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն և հաշվի չեն առնվում ընտրություն կատարելիս:

3. Բացահայտվել է հարցված փորձագետների 81%-ի կարծիքը բռնցքամարտում ընտրության համակարգի կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ, ինչը կարելի է դիտարկել որպես սոցիալապես առաջադրված հիմնահարց, որը ցույց է տալիս, որ տվյալ խնդիրը գիտական ուսումնասիրությունների անհրաժեշտություն ունի:

4. Հետազոտության արդյունքները վկայում են, որ պատանի բռնցքամարտիկների մորֆոֆունկցիոնալ, հոգեբանական ցուցանիշները և շարժողական ընդունակությունները՝ ըստ տարիքի և մարզման ստաժի, անընդհատ աճի դինամիկա են դրսևորում:

5. Մշակվել և ներդրվել է մարզիչների գործնական աշխատանքում բռնցքամարտիկների ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկա, որը ներառում է՝

ա) հետազոտության պարզ և մատչելի մեթոդներ, որոնք կիրառվում են մոդելային ցուցանիշների ուսումնասիրման համար,

բ) ընտրության համալիր ցուցանիշների մոդելային բնութագրեր,



գ)ուսումնասիրվող ցուցանիշները գնահատող մոդելային և դրանց միավորների հանրագումարային մեծությունների սանդղակներ, որոնք թույլ են տալիս կատարելագործել ուսումնամարզական գործընթացը, կարող են ծառայել որպես գործնական ուղեցույց ոչ միայն մարզիչների, այլև բնագավառի համապատասխան մասնագետների համար՝ բռնցքամարտիկների ընդունակությունները գնահատելու և հեռանկարային մարզիկներ ընտրելու գործընթացում:

6. Մանկավարժական համեմատական գիտափորձի արդյունքում բացահայտվել է մշակված ընտրության համալիր-գումարային գնահատման մեթոդիկայի արդյունավետությունը, պարզվել է, որ այս եղանակով ընտրված փորձարարական խմբի մարզիկների ուսումնասիրված ցուցանիշների գերակշիռ մասի աճի տեմպերը ստուգողական խմբի համեմատ՝ ընտրված ըստ մարզադպրոցի ծրագրի, բարձր են և համապատասխանաբար կազմում են՝

ա) շարժողական ընդունակությունները. փորձարարականում՝ 13,4%, իսկ ստուգողականում՝ 8,13%,

բ) հոգեբանական գործոնները՝ 28,04% և 12,07%,

գ) ֆունկցիոնալ գործոնները՝ 14,1% և 10,66%, իսկ սրտի զարկերի հաճախականության թերվերականգնումը բեռնվածությունից հետո՝ 10,41% և 32,33%:

7. Մանկավարժական համեմատական գիտափորձի արդյունքում պարզվել է նաև, որ մարզիկների մրցակցային գործունեության արդյունավետության ցուցանիշները կազմում են՝

ա) դիպուկ հարվածների քանակը փորձարարական խմբում՝ 12,5%, ստուգողական խմբում՝ 6,9%.

բ) մրցակցի հարձակողական հարվածների և դրանց «կասեցման» ցուցանիշները՝ 88,57% և 55,01%,

գ) տեխնիկատակտիկական պատրաստվածության գործակիցը՝ 1,02 և 0,63.

դ) մրցումներում փորձարարական և ստուգողական խմբերում հաղթողների թիվը համապատասխանաբար՝ 25 և 12:

8. Բռնցքամարտում սկզբնական ընտրություն կատարելիս ուսումնամարզական խմբեր պետք է ներգրավել մարզիկների, որոնց հավաքած միավորների գումարը, ըստ շարժողական ընդունակությունների, մորֆոֆունկցիոնալ, ժառանգական և հոգեբանական գործոնների, 101,51-ից բարձր է և համապատասխանում է հանրագումարային մոդելային սանդղակի միջինից բարձր ու բարձր գնահատման մակարդակին:

**Ատենախոսության հիմնական դրույթները արտահայտված են հեղինակի հրատարակած հետևյալ աշխատություններում**

1. Ա.Հ. Շախյան, Ա.Լ. Հակոբյան, Բոնցքամարտիկների ուսումնամարզական խմբերի ընտրությունը, Միջազգային 41-րդ համաժողովի գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2014, էջ 289-293:

2. Ա.Հ. Շախյան, Մասնագիտացված զգայությունների դերը բոնցքամարտիկների սկզբնական ընտրության փուլում, 42-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, «Սպորտային մանկավարժական գիտությունը Հայաստանում», Երևան 2015, էջ 287-291:

3. Ա.Հ. Շախյան, Պատանի բոնցքամարտիկների մորֆոֆունկցիոնալ ցուցանիշների զարգացման առանձնահատկությունները, 42-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, «Սպորտային մանկավարժական գիտությունը Հայաստանում», Երևան 2015, էջ 291-294:

4. А.О. Шахан, Совершенствование системы комплексного отбора юных боксеров в учебно-тренировочные группы, Апробация, Ежемесячный научно-практический журнал, №11 (38), 2015 64-69 стр., апробация [www.aprobация. RF](http://www.aprobация. RF) научно-издательский центр, г. Махачкала, 2015.

5. Ա.Հ. Շախյան, Պատանի բոնցքամարտիկների սկզբնական ընտրության մեթոդիկական (մեթոդական երաշխավորություն), հեղինակային հրատարակություն, Երևան 2015, 34 էջ:

**ШАХЯН АЛЕКСАН ОГАНЕСОВИЧ**  
**СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ НАЧАЛЬНОГО КОМПЛЕКСНОГО ОТБОРА**  
**В БОКСЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02-“Методика преподавания и воспитания”(физическая культура).

Защита диссертации состоится 25 марта 2016г. в 16<sup>00</sup> на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК.

Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52<sup>а</sup>, корпус факультета армянской филологии ЕГУ, 203 аудитория.

**РЕЗЮМЕ**

**Актуальность.** Современный бокс характеризуется высокой интенсивностью тренировочного процесса и соревновательной деятельности, выполнением сложно- координационных и технико-тактических приемов в строго ограниченном промежутке времени, высокими физическими и нервно-психическими нагрузками на организм.

Преодолеть эти трудности и достигнуть высоких спортивных успехов могут не все, а лишь избранные, наделенные характерными для данного вида спорта способностями. По этой причине в системе подготовки боксеров отбор одаренных спортсменов приобретает важное значение. В соответствии с литературными данными таковыми являются лишь 0,13% населения.

Поиск и отбор одаренных боксеров должен носить комплексный характер включающий педагогические, антропометрические, функциональные, психологические, социологические и другие методы исследования.

Становление высококлассного спортсмена, способного достичь высот мирового масштаба, зависит от результативно осуществленного отбора уже на начальном этапе спортивной подготовки. Если на данном этапе тренер не выявит у 12-14 летних спортсменов необходимые в боксе способности, то в более старшем возрасте в вопросах отбора он встанет перед серьезными затруднениями.

Анализ научно-методической литературы относительно вопроса отбора боксеров выявил, что данная проблема требует своего совершенствования. Это обусловлено тем, что всесторонне, не определены те показатели и методы их изучения, а также нормативы этих показателей, не разработаны их модельные оценочные шкалы, которые дадут возможность отобрать перспективных боксеров и укомплектовать учебно-тренировочные группы. Кроме того вопросы спортивного отбора, основанного на целостной (комплексно-суммарной) оценке способностей спортсмена повышающий его эффективность, также не нашли своего решения.

Разработав комплексно-суммарную оценочную систему отбора, учитывающую и оценивающую в целом морфофункциональные, психологические, наследственные показатели, а также двигательные способности, можно решить проблемы, которые существуют в действующей системе отбора. Это даст возможность наиболее точно и объективно определить перспективность спортсмена и повысит результативность системы спортивного отбора.

**Цель исследования.** Усовершенствовать комплексную систему спортивного отбора для комплектования учебно-тренировочных групп перспективными боксерами и экспериментально обосновать ее эффективность.

**Научная новизна диссертации.** Впервые получены данные о двигательных способностях, морфофункциональных и психологических показателях 12-14 летних армянских боксеров.

Разработана комплексно-суммарная оценочная методика отбора боксеров для комплектования учебно-тренировочных групп и обоснована ее эффективность.

Научно обоснована целесообразность разработки модельных оценочных шкал морфофункциональных, двигательных способностей, наследственных и психологических показателей, а также целостных (итоговых) модельных шкал для оценки способностей, перспективности юных боксеров и комплектования учебно-тренировочных групп на этой основе.

Выявлено, что всесторонняя, комплексная, целостная оценка показателей спортсменов существенно повышает эффективность спортивного отбора.

**Теоретико-прикладное значение исследования.** Разработанная, научно обоснованная комплексно-суммарная оценочная методика спортивного отбора способствует совершенствованию системы отбора, расширяет, дополняет положения теории и методики спорта.

Материалы диссертации могут быть использованы при разработке программ детско-юношеских спортивных школ по боксу, при составлении учебников, методических указаний, на курсах переподготовки тренеров, на лекциях по предмету “Теория и методика тренировки в боксе” в институтах физической культуры.

Данные полученные в результате исследования допускают результативнее осуществить отбор юных боксеров, тренера получают возможность более рационально организовать процесс отбора в учебно-тренировочные группы. Посредством модельных оценочных шкал тренера оценят спортивную перспективность каждого боксера.

**Структура и объем диссертации.** Диссертационная работа изложена на 138 страницах компьютерного текста. Состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложений.

**ALEKSAN HOVHANNES SHAKHYAN**  
**IMPROVEMENT OF INITIAL COMPLEX SELECTION SYSTEM IN BOXING**

Dissertation for the degree of Candidate of Pedagogic Sciences (PhD) 13.00.02-“Methods of teaching and education” (Physical education).

The dissertation will take place on March 25 2016 at 4.00 p.m. at the meeting of specialized Council on Pedagogy supervised by Higher Attestation Commission

Address: 0025, 52a Abovyan str., Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, Auditorium N 203.

**SUMMARY**

**The relevance of the research.** Modern boxing is characterized by high intensity of the training process and competitive activity, performing complex coordinated and tactical techniques in a strictly limited period of time, high physical and psychological stress on the body.

Not everyone can overcome these difficulties and achieve high sporting success, only selected are endowed with relevant abilities characteristic the specific type of sports.

That's why in the system of training the boxers, the selection of gifted athletes acquires a very important significance. In accordance with published data these are only 0,13% of the population.

The selection of the gifted boxers must have complex character including pedagogical, anthropometric, morphofunctional, psychological, sociological and genetic methods of research.

The establishment of a highly skilled athlete capable of achieving the heights of the world scale depends on comprehensive and complex selection already at the initial stage of sports training. If at this stage the coach doesn't reveal and estimate all the necessary abilities of twelve-year-old athletes up to fourteen-year-old ones and doesn't make the right choice then at older ages in subsequent phases of selection he will meet very serious difficulties.

The analysis of scientific methodical literature on the issue of selection of the boxers showed that the given problem requires improvement. It is due to the fact that many indicators and methods of study, norms of these indicators haven't been identified yet, their model rating scales haven't been developed which will give an opportunity to recruit educational training groups.

Besides the issue of improving sports selection based on the holistic (complex-total) evaluation of the athlete's abilities which increases the efficiency of the selection process and reliability to foresee promising athletes hasn't been solved either. Based on the above mentioned data it should be concluded that with the development of the complex-total system of selection taking into account morpho-functional,

psychological, hereditary factors as well as motor abilities and their holistic evaluation, only those problems will be fulfilled which exist in the current system of selection. It will give an opportunity to identify the perspectives of the athlete more accurately and objectively and it will increase the effectiveness of sports selection system.

**The purpose of the research.** To improve the system of complex sports selection based on the theoretical and experimental research and to prove its effectiveness in practice.

**The scientific novelty of the dissertation.** For the first time some data about physical development, motor abilities, functional and psychological indicators of twelve-year-old Armenian boxers up to fourteen-year-old ones have been received.

Some complex total methods of selection have been developed for recruiting educational training groups.

The following is scientifically proved: the expediency of developing model grading scales of physical education indicators, motor and functional readiness, hereditary and psychological as well as holistic (final) model scale for evaluating young boxers abilities and recruiting scientific training groups on the given basis.

It has been revealed that comprehensive, complex, holistic evaluation of the athletes' indicators significantly increases the efficiency of sports selection.

**The theoretical practical importance of the research.** The developed and scientifically justified complex-total evaluation method of sports selection promotes improvement of the selection system, expands, and complements the basic tenets of the theory and methods of sports and physical education.

The materials of the dissertation can be used in developing programs for children and youth boxing training schools, in writing text-books, guidelines and recommendations in the courses of retraining coaches for the lectures on the subject theory and methods of teaching boxing for students of PE institutions.

The data obtained as a result of the research allow realising the selection of young boxers more effectively, the coaches get an opportunity to organise the process of recruiting educational training groups more rationally. Through model evaluation scales the coaches will evaluate sports perspectivity of each boxer.

**The structure and volume of the dissertation.** The Dissertation consists of 138 pages of computer text. It comprises introduction, three chapters, conclusions, list of references and applications.